ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 110-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 11-ի թվով 15-րդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
2.Վայք քաղաքի Վ.Սարգսյան 1/1 հասցեում «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ-ի կողմից բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցմանը նախնական համաձայնություն տալու մասին /զեկուցող՝ Գ. Գևորգյան/:
3.Վայք համայնքի տարածքում գտնվող ծառերը հատելուն թույլտվություն տալու մասին /զեկուցող՝ Գ.Գևորգյան/:
4.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային եղանակով օտարելուն համաձայնություն տալու, վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները սահմանելու մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
5.Վայք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը առանց մրցույթի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու, վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
6. Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում լրացումներ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին դիմելու մասին /զեկուցող՝ Ա. Ղազարյան/:
7.Վայք համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 11
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 111-Ա

ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ Վ.ՍԱՐԳՍՅԱՆ 1/1 ՀԱՍՑԵՈՒՄ «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերով, և հիմք ընդունելով 21.11.2025 թվականին «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ-ի կողմից անցկացված հանրային քննարկման արձանագրությունները.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ նախնական համաձայնություն «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Վայք համայքի Վայք քաղաքի Վ.Սարգսյան 1/1 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքեր կառուցելուն:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 11
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 112-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԾԱՌԵՐԸ ՀԱՏԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ և 42-րդ կետերի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Թույլատրել հատել Վայք համայնքի Վայք քաղաքի Ալավերդյան 10 հասցեում գտնվող մեկ հատ թթենի, Ջերմուկի խճուղի 13 հասցեում գտնվող երկու հատ ընկուզենի, Արին բնակավայրի 1-ին փողոց հասցեում (վարչական շենքի մոտ) գտնվող երկու հատ չորացած բարդի և Սերս բնակավայրի 2-րդ փողոց հասցեում (ոռոգման առվի եզրին) գտնվող երկու հատ չորացած բարդի:
2.Ստացված վառելափայտը անհատույց հատկացնել համայնքի անապահով ընտանիքներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 11
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 113-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ՝
1.1/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 53/74 հասցեում գտնվող 10-003-0024-0375 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 09042025-10-0008, գաղտ. LNW7EJZIXCTT) բնակավայրերի նպատակային նշանակության 0.02 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) հասարակական կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 7 545 200 (յոթ միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:
1.2/ Վայք համայնքի Հերհեր բնակավայրում գտնվող 10-028-0174-0016 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 03122019-10-0002, գաղտ. SCB8HCDVQYW1) գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.83782 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ այլ) գյուղատնտեսական գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի

ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 2 471 600 (երկու միլիոն չորս հարյուր յոթանասունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 11
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 114-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով, 75-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման 44-րդ կետի ը/ ենթակետը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաշվի առնելով ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության /ներկայիս՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության/ կողմից 16.05.2018թ. «Եղբայրներ» ՍՊԸ-ին տրամադրված թիվ ԱԿՏ-ՆԼ-583 Հերհեր հրաբխային ավազների հանքավայրի բաց եղանակով շահագործման օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը, թիվ ՇԱԹ- 29/583 լեռնահատկացման ակտը՝ վերջինիս հետ կնքվել է ընդերքօգտագործման պայմանագիր 4,0 հա հողատարածքի շահագործման համար, 45,6 տարի ժամկետով ինչը նշանակում է, որ «Եղբայրներ» ՍՊ ընկերությունն ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդերքօգտագործման իրավունք, Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Հերհեր բնակավայրում գտնվող թիվ 10-028-0105-0009 կադաստրային ծածկագրով 2.75654 հա մակերեսով հողամասը առանց մրցույթի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել «Եղբայրներ» ՍՊ ընկերությանը ընդերքօգտագործման իրավունքի ժամկետին համապատասխան՝ մինչև 16.11.2063 թվականը, և վճարի չափը սահմանել տարեկան 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 11
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 115-Ա

ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N 312-Ա հրամանով հաստատված անվանացանկում հետևյալ լրացումը կատարելու համար.
1.1Անվանացանկի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի երրորդ ենթախումբը լրացնել հետևյալ բովանդակությամբ, 2-րդ կետով՝ գլխավոր մասնագետ (կրթության գծով):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -1	Դեմ -8	Ձեռնպահ -0
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ	ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 11
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 116-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2026 թվականի փետրվարի 11–ին, ժամը՝ 18:30–ին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 11
ք. Վայք